



Կ Ա Ր Գ

«Փաստաբանի օր» սահմանելու հարցով վաստաբանների առաջարկներն ընդունելու մասին

1. Սույն կարգով սահմանվում է Հայաստանի Հանրապետության վաստաբանների պալատի (**այսուհետ՝ Փաստաբանների պալատ**) 2019 թվականի հոկտեմբերի 19-ի հերթական ընդհանուր ժողովում «Փաստաբանի օր» սահմանելու մասին օրակարգային հարցով քվեարկության ներկայացնելու նպատակով **ամսվա և ամսաթվի** նշումով առաջարկներն ընդունելու հետ կապված ընթացակարգը:

2. «Փաստաբանի օր» սահմանելու վերաբերյալ առաջարկ (**այսուհետ՝ Առաջարկ**) կարող է ներկայացնել՝

ա) առնվազն 20 (քսան) վաստաբանից կազմված խումբը (**այսուհետ՝ Խումբ**).

բ) Փաստաբանների պալատի կողմից ձևավորված աշխատանքային խմբի (**այսուհետ՝ Հանձնախումբ**) համակարգողը:

3. Առաջարկը ներկայացվում է Փաստաբանների պալատի հաշվիչ հանձնաժողովի նախագահին՝ 2019 թվականի հոկտեմբերի 1-ից (ներառյալ) մինչև 2019 թվականի հոկտեմբերի 10-ը (ներառյալ) գրավոր ձևով՝ ստորագրված Խմբի բոլոր անդամների կամ Հանձնախմբի համակարգողի կողմից: Հանձնախմբի համակարգողի ներկայացրած առաջարկը պետք է պարունակի հիմնավորում:

4. Խումբը և Հանձնախմբի համակարգողը կարող է ներկայացնել «Փաստաբանի օր» սահմանելու մասին միայն մեկ առաջարկ: Խմբում ներգրավված վաստաբանը չի կարող ներգրավվել այլ առաջարկ ներկայացրած Խմբում:

5. Առաջարկները ներկայացվում են առձեռն կամ փոստով: Էլեկտրոնային փոստով առաջարկն ուղարկելու դեպքում, պետք է կցվի ստորագրված Առաջարկը:

6. Առաջարկը չի ընդունվում, եթե՝

- Առաջարկում նշված չէ «Փաստաբանի օր» սահմանելու ամիսը և ամսաթիվը կամ ներկայացված են մեկից ավելի տարբերակներ.
- Հանձնախմբի համակարգողի կողմից ներկայացված Առաջարկն ստորագրված չէ.

- Խմբի կողմից ներկայացված Առաջարկն ստորագրված չէ առնվազն 20 փաստաբանի կողմից.
- սույն կարգում նշված այլ պահանջները խախտելու դեպքում:

7. Առաջարկի ընդունումը մերժելու դեպքում Հաշվիչ հանձնաժողովի նախագահը երկու աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տեղեկացնում է Առաջարկ ներկայացնողին՝ մերժման պատճառների մասին:

8. Առաջարկն ընդունելուց հետո, հաշվիչ հանձնաժողովի նախագահը Փաստաբանների պալատի կայքէջում հրապարակում է ստացված առաջարկը:

9. Առաջարկներն ընդունելու վերջնաժամկետից հետո ոչ ուշ, քան 5 (հինգ) օրվա ընթացքում Փաստաբանների պալատի հաշվիչ հանձնաժողովի նախագահը Փաստաբանների պալատի կայքէջում ժամանակագրական հերթականությամբ հրապարակում է «Փաստաբանի օր» սահմանելու վերաբերյալ այն առաջարկները (ամսաթվերը), որոնք ներառվելու են ընդհանուր ժողովի քվեաթերթիկում:

* * *